Արձանագրություն N 3
«ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/023» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «13» նոյեմբերի 2018թ.
ժ. 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գայանե Օսիպյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Հասմիկ Վանյանը և Մագդա Կարապետյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղալյանը

I. Էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակցի կողմից գնումների մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները) ներկայացնելու մասին

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե կատարած հարցման արդյունքում «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ն, «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ն չունեն ժամկետանց պարտավորություններ:

2. Ընդունել ի գիտություն, որ «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ն, «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ն ներկայացրել են գնումների մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

3. Հանձնաժողովի քարտուղարը մասնակցի գնումների մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը տրամադրեց հանձնաժողովի ամդամներին:

4. Մասնակիցների հայտերի ամբողջական և լիարժեք գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունները՝

- «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումի մեջ (Հավելված 2) առկա է անճշտություն, մասնավորապես՝ մասնակիցը դիմումի մեջ նշել է գործակալության պայմանագրի պատճե, համատեղ գործունեության պայմանագրի պատճե և հրավերով սահմանված լիցենզիայի պատճե, սակայն մասնակիցը ներկայացրել է հայտը իր ընկերության անունից, սույն մրցույթին համատեղ գործունեությամբ չի մասնակցում և սույն հրավերով լիցենզիա չի պահանջվում: Ուստի անհրաժեշտ է շտկել վերոնշյալ անճշտությունները:
- «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա է

անճշտություն, մասնավորապես՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ, թե ինչ մոդելի ապրանք է ներկայացվելու:

- «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումի մեջ (Հավելված 2) առկա է անճշտություն, մասնավորապես՝ մասնակիցը դիմումի մեջ նշել է գործակալության պայմանագրի պատճե, համատեղ գործունեության պայմանագրի պատճե և հրավերով սահմանված լիցենզիայի պատճե, սակայն մասնակիցը ներկայացրել է հայտը իր ընկերության անունից, սույն մրցույթին համատեղ գործունեությամբ չի մասնակցում և սույն հրավերով լիցենզիա չի պահանջվում: Ուստի անհրաժեշտ է շտկել վերոնշյալ անճշտությունները:

II. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

Հանձնաժողովը որոշեց.

ա) Ընտրված մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝

- Չափաբաժիններ 1-4, 6-9 և 11 - «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին

բ) Մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ առաջարկելով «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին և «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

գ) Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում ՝ ոչ ուշ քան սույն թվականի նոյեմբերի 15-ի ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում.
Կողմ՝ 3, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Գ. Օսիպյան

_____ Հ. Վանյան

գնահատող անդամներ՝ _____ Մ. Կարապետյան

քարտուղար՝ _____ Ա. Բաղալյան